

# ՀԱՅԱՍՏԱՆԻ

Լուս

ԱՐԵՎ ԹԻՄՈՒԹՅՈՒՆ



13 ՀՆ. Յ Ա Դ Ա Ր Ա

Տ Ե Ր Ա Վ Ա Ր Ա

Ի Վ Ե Ր Ա Վ Ա Ր Ա



281  
7 89

# ՀԱՅՈՒԹՎԱՊԵՏՈՒՄ,



Ալաբ

ՄԵՐԵԲ ԱՌԱՄԱՆԻ ԵՎ

ՎՐԻՄԻՍՈՆԵԿԱԿԱՆ ՀԱւատոց

Կ ԱՆԵՐԱՅ Ա ՄՐԺ-ԱՎԵ-ՄԵ

ՎՐԻԴՈՐԵԱՆ Օ ՋԻւռնացւոյ :



1865—ԹՑՔԵ ԱՐԴԻ.

Դ Ա Ե Զ Ա Ւ Ը Ծ Ո Ւ Յ Ա

Հ Հ  
17086






1539

4776

2n.



## ԱՅ ՄՐՎԵԿ ԱՎԱ ՌԹ ԺԱ

Օ ազգո ազգս Հոգեկան վարժից համառօտ և  
ծայրաքաղ՝ յուրոյն ուրոյն 'ի սակաւաթերթ մա-  
տենիկս բաշխեցի՝ Մանր Ռւսմունս զնոսին անուա-  
նելով . յորոց և զերկոսին առաջիկայսդ (զշաւա-  
տապատումդ իմա' և զքրիստոսապատում) առ 'ի  
պէտս մատաղատիոց մանկանց և եթ՝ անծանօթից  
գրոց բարբառոյ, կամ եղեւ ինձ գրել 'ի լեզու-  
աշխարհիկ, այլ յաշխարհիկ այնպիսի՝ որ ամենե-  
ցուն առ հասարակ հասկանալի իցէ, եթէ Նախի-  
ջեանեցւոց և Պրիմեցւոց, եթէ Աժդարիսանեցւոց և  
Պալարեցւոց, եթէ Վրաստանեայց, եթէ Հայաստա-  
նեայց, և եթէ որոց Տաճկաստանի կողմանց են  
բնակիչք, կամ անդուստ առ մեզ եկաւորք:

Ա յլ զի խտիր ո'չ փոքր է 'ի տարազ կամ յոճ  
խօսից յիշատակելոցդ Սերազնեայց 'ի պատճառս  
շատ կամ սակաւ օտարոտի ձայնիցն խառնու-  
թեան դրէթէ յիւրաքանչիւրմն, ջան եղի ես  
որչսփ 'ի կարի էր ըստ հանգամանաց ժամանակիս

ՆԵՐԵԼՈՅ՝ պարզ և յստակ հայերէնախօս յամ.  
Նայն ՚ի բանս լինել՝ ՚ի բաց զիսորմութիւնն  
վտարելով։ Եւ առ այս՝ կանոնաց օմանց պէտք  
եղեն պահպանութեան, որը են.

Մ. ԱՇ ՚ի գործ ածել ամենեին զբառս յօստար  
լեզուաց եկամտեալս, որպիսի են՝ Վուչայ  
(փողոց), չաղ (գեր, պարարտ), նաչաղ (հիւանդ)  
իբրունուազեալ ՚ի գիրութենէ, նիշար), սքու-  
փութ (ժլատութիւն), գլուստ (ուղիղ, ճշմա-  
րիտ), գլուտել (ուղղել), սուտիթ անել  
(դատել), փօտսութ անել (արկանել ընդ  
դատաստանաւ), ապէժաթ անել (զրկել),  
պղաւել (գոչել), մուլապ տալ (սպասել),  
վարավուրտ անել (դիտել, նկատել), սա-  
հաթսաղ (ժամակազմ) քասիպութիւն կամ  
քէսիպութիւն (տնանկութիւն, չքաւորութիւն),  
սօվտաքարութիւն (վաճառականութիւն),  
պէտամաղ լինիլ (դժուարիլ, նեղիլ), նա-  
մաղուլ անել (տարապարտս կամ անշին)

խօսիլ), վլուաղել (շտապել), ապուլ տալ (թոյլ տալ, թողուլ, արձակել), թապլել ('ի բաց ձգել, ընկենուլ), հարայ տալ (աղաղակ կամ ճիչ բառնալ), կալաճի (խօսք, խօսակցութիւն, զրոյց), խուճուռ (զարմանալի), խուտուր (ադարակ), ղըաղ (եղր, ծայր), կուման (կողմն), խի՛, եաղուղ (ընդէ՛ր, վասնէ՛ր), իմալ (ո՞րպէս), այս թավուր՝ այդ թավլուր (այսպիսի՝ այդպիսի), ալեապուր (անամօթ, խայտառակ), պեղարած (ձանձրացեալ), ճիկը (բարկութիւն), ճկուիլ (բարկանալ), տիբունանք (ամենեքեան)։

**Է** · **Ջ**արել զիմամատար յօդսդ կամ զմանիկսդ կը՝ կամ կ՝ 'ի սկիզբն բայից 'ի ներկայ ժամանակս Աահմանական եղանակի, որպէս և ոչ զկոր՝ 'ի յանդս, քանզի ոյդ ձայնք անհամք և անպէտք ըստ ամենայնի՝ ոչ միայն շտան զմեծ իմն զօրութիւն իմաստից կամ զառաւելութիւն, ոյլ և ծանրալուր և խժական զբանն գոր-

7

ծԵՆ՝ կորուսանելով միանդամայն զշամեղականն( \* )կոչեցելոյ բարբառոյս մերոյ զբնիկ քաղցրութիւն . որպէս եթէ ոք փոխանակ Ալտրեմ , ուտեմ , , ասելոյ , Ալլը կտրեմ , կուտեմ , ասիցէ . կամ անհամագոյն ևս՝ « Ալլը կտրեմ կոր , կուտեմ կոր » :

7' | բաց ձգել զշանդսդ ում և ամ .  
յորոց զառաջինն (հանդերձ էական բայիւս եմ) սովոր են ոմանք կցել գրէթէ յամենայն բայս( \*\* ) , ՚ի ներկայ և յանցեալ անկատար ժամանակս . և զեցկրորդն յանցեալ կատարեալ ժամանակս : Որով՝ փոխանակ ասելոյ « Արթամ , գնամ , սիրէ , ատէ . խօսէիր , պատմէիր . բարկանայր , կռուեմ , ասեն « Արթում

---

(\*) Ալարդան մեծն ՚ի մեկն . ծննդ . (Ճ-Թ . 7) :

(\*\*) Կմա՞ յայնս՝ որոց լծորդութիւն է՝ կամ եմ , կամ իմ , կամ ամ . որպէս շինեմ , ծնանիմ , հաւատամ :

Եմ, գնում Եմ, սիրում է, ատում  
է. խօսում էիր, պատմում էիր, բար-  
կանում էր, կռուում էր, և փոխանակ  
ասելոյ Ա, կի կամ Եկայ, նստայ, կերայ,  
խմեցի, գրեցի, ասացի, լսեցի, , ասեն  
Եկամ, նստամ, կերամ, խմամ, գրամ,  
ասամ • լսամ,, . կամ Ա Եկեցիմ, նստե-  
ցիմ, կերեցիմ, խմեցիմ, գրեցիմ, ա-  
սեցիմ, լսեցիմ,, .

Արք զվերջինդ զայդ՝ ՚ի կիր առնուն յեղանակ,  
բաց յօտարանալոյ յիսկական կանոնաց լեզուիս՝  
ուրեք երբէք և զիմաստսն շփոթեն . զի փոխա-  
նակ ասելոյ ուղղութեամբ Ալարդացի,, ասեն  
Ակարդացիմ կամ կարդամ . յորոց առա-  
ջինն տձեւ է ըստ կազմութեանն, և երկրորդն՝  
սխալ ըստ նշանակութեանն, որպէս յայտնի  
իսկ է.

**Պ.** Օ ներդոյական հոլովե ում վերջա-  
ւորութեամբ՝ ո՛չ յաճախ և ո՛չ անխտիր ՚ի կիր  
առնուլ, այլ դուն ուրեք, և յայն բառս միայն՝  
որովք զվայր ինչ կամ զտեղի իրիք կամ զսակ

Ղ

մանաւոր ժամանակ նշանակել կամք իցեն, որ  
սիսի են սոքին «Վնապատումը», դաշ-  
տումը, քաղաքումը, պալատումը, պար-  
տիզումը, խցումը, սեղանումը, ամ-  
սումը, շաբաթումը» ։ Խեպէտև ոչ օտար  
ինչ է այս ՚ի նախնեացն մերոց սովորութենէ,  
(ըստ որում տեսանի ուրեք ուրեք ՚ի մատեանս  
նոցա գործածութիւն այսպիսի հոլովոյ)՝ օակայն  
և այնպէս բազում խնամով բացառութեան  
պէտք Են յայսմ կանոնի։ Քանզի խորթ և ան-  
համ է ասել «Տնումը, սրտումը, աչ-  
քումը, մտքումը, պատերազմումը»,  
դժոխքումը, աբքայութիւնումը» ։ Եւ  
վասն այսորիկ լաւ վարկայ ես զգոսին և զդոյն-  
պիսիս վարել ՚ի սեռական հոլովն՝ հանդերձ նա-  
խադրութեամբս մէջ՝ որ զներգոյականի ըերէ  
զնշանայութիւն ։ զոր օրինակ ։ «Ճան մէջ, սըր-  
տի մէջ, աչաց կամ աչքերի մէջ,  
մտաց մէջ, դժոխոց մէջ, աբքայու-  
թեան մէջ» ։

**Ա**ռբեքին այս կանոնք՝ զորս պահել կարեղը  
համարեցայ, ո՞չ միայն դժուարիմանալի չառնին  
զբանն, այլ՝ մասամբ իւիք ձեռնտու ևս լինին ա-  
շակերտաց՝ առ փոքր փոքր ՚ի բուն անդը մերձե-  
նալ նախնականին մերոյ գեղեցիկ Հայախօսու-  
թեան. զորոյ քաջ ևս առցեն նոքա զճաշակ՝ յոր-  
ժամ քերականական կանոնացն՝ այլ և Հոետո-  
րականին՝ հմտանայցեն լիով,

**Ա**յս զորոյ էր առ տեղեաւս մանրախուզիւ բան  
՚ի մեջ առնուլ զայլոց ևս հանգամանաց կամ  
զայլայլախառն պէսպիսութենէ աշխարհիկ լե-  
զուին մերոյ՝ ըստ գաւառաց գաւառաց, ևս և  
զիսորթ և զշարազատ հնչմանց Հայկական տառիցս՝  
զորոց վէճ ծանր է առ ոմանս ՚ի մերոց քննասի-  
րաց: Այլ այդ ամենայն այլում թողցի պատեհի-  
զի առ ժամն չպահաւորութեան բանի խնամ՝ տա-  
նել արժա՛ն է,

**Ի** կատարած կըս Քրիստոնէական լւսմանց՝  
յուելի և քաղուածոյս ՚ի բարառնական տաղա-  
չափութեանց Ընորհալի հայրապետին մերոյ Ներ-  
պիսի Կլայեցւոյ (որպէս և ՚ի վախճան Աւետա-  
րանական պատմութեանն՝ ՚ի կենարար վարդապե-  
տութեանց Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի) ըստ  
կարդի այլուրենից. որպէս զի մանկունք յետ

վարժելոյ ՚ի նախակարգեալ ուսմունսն ու ուսցին և  
զայնոսիկ ասել ՚ի բերան ։ Իսկ զիմաստսն բացառ-  
բել աշխարհիկ լեզուաւ՝ ուսուցանողին լիցի գործ ։

**Ա**յս ՚ի պատրաստի և այլք ՚ի Սանունց Աւա-  
մանց այս է՝ Հնոյ Կոտակարանին ։ Աս և Եկեղե-  
ցական Պատմութեանցն Համառօտութիւնք՝ ոչ  
յաշխարհիկ՝ այլ ՚ի գրոց բարբառ ։ յառանձին  
առանձին ՚ի փոքրիկ տետրակո ամփոփեալք ։ զորս  
և հետ զհետէ տպագրութեամբ ՚ի լոյս ընծայեցից  
առ ՚ի պէտս ամենասիրելի մանկանց Ազգիս մերոյ ։



Անունց Աւամանց որ աստղս գոն՝  
 Վիշտ դիր, մանուկ, լեռ և ըզգօն .  
 Խերոյ աճմամբ և չաւատոյ՝  
 Տեառն լստուծոյ պաշտօն մատու .  
 Երկեղած միտք ՚ի քեզ թէ կայ,  
 Օոր ուսանիսդ՝ անդու խոկա .  
 Բաբունապետն հանուրց է խուռ  
 Օմանկտին օրհնեալ ըդեռաբոյս,  
 «Վայդափսեաց է, ասէ, սրժան  
 Շերկնից հանդէլ ՚, յօթեան»,  
 Շուսափափագ փութս և դու  
 Կըցորդ նոցուն լինել պառու .  
 Եքեզ արդ ժամ անմեղ աւուրբ  
 Հըեշտականալ ՚ի վարս ի սուրբ .

---

3  
“Բազում են մեզ բանք, և դրժու  
արապատում ՚ի մեկնել . . . Պիտոյ  
է ձեզ ուսանել՝ թէ զի՞նչ են Աշանա-  
գիրք սկզբան (Վանը Ուսմունք կամ  
Համառօտ Պիտելիք) բանիցն աստու-  
ծոյ . և Եղիոնուք կարօտ կաթին, և ոչ  
հաստատուն կերակրոյ : Օ ի ամենայն  
որ կաթնկերէ, տգէտ է բանին արդա-  
րութեան . քանզի տղայ է : Այլ կա-  
տարելոցն է հաստատուն կերակուր .  
որոց՝ վաճ ՚ի շախսն հասանելոյ՝ ճաշա-  
կելիքն կիրթ են ընտրութեան բարուոյ  
և չարիո :

# ՀԱՅՈՒԹՎԱԿԱՆ ԱՅ

Լամ

Վանը լուսունք

Քրիստոնէական Հաւատոյ :



Հ . Հաւատով ի՞նչ ես դու :

Պ . Քրիստոնեայ :

Հ . Օ ի՞նչ նշանակէ ազրիստոնեայ,,  
բառդ :

Պ . ազրիստոսի հետեւող կամ հաւա-  
տացող,,(\*):

---

(\*) Զքրիստոնեայ անունը՝ նախ Անտիօք քաղա-  
քումը Առաքեալք գրին հաւատացելոցն Քրիստոսի  
(Կործ. Ժա . 26) :

Հ. Վրիստոնէական վարդապետու-  
թիւնն զի՞նչ ուսուցանէ :

Պ. զլ՛ Ֆաղաշտութիւն :

Հ. զլ՛ ստուած ի՞նչպէս պարտ է պաշ-  
տել :

Պ. Ճ' շմարիտ Հաւատով , հաստատուն  
Յուսով , և անկեղծ Ակրով :

### ՊԵ. Ա.

### Հ Ա. Ե Ա. Ք .

Հ. Վրիստոնէական Հաւատալիքն յո՞ր  
գրուածոյ մէջ պարունակեալ են  
համառօտիւ :

Պ. Հանգանակի մէջ :

Հ. Հանգանակն ո՞րն է :

Պ. Հաւատամքն է .

Հ. Գիտե՞ս՞ի բերան :

Պ. Գիտեմ :

Հ. Ասա :

Պ. «Հաւատամք ՚ի մի լուսուած՝ հայր  
ամենակալ՝ յարարին երկնի և երկրի,  
երեւելեաց և աներեւութից :

Ա. ՚ի մի Տէր Յիսուս Քրիստոս  
յորդին լուսուածոյ, ծնեալն յլուսու-  
ծոյ Հօրէ միածին, այսինքն յէռութենէ  
Հօր . լուսուած յլուսուածոյ, լոյս ՚ի  
լուսոյ, լուսուած Ճշմարիտ՝ յլուսու-  
ծոյ Ճշմարտէ, ծնունդ՝ և ոչ արարած :  
Կոյն ինքն ՚ի ընութենէ Հօր . որով ա-  
մենայն ինչ եղև յերկինս և ՚ի վերայ  
երկրի, երեւելիք և աներեւոյթք :

Ա. Որ յաղագս մեր մարդկան՝ և վասն  
մերոյ փրկութեան, իջեալ յերկնից :

մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատա-  
բելապէս՝ ՚ի Արքիամայ սրբոյ կուսէն՝  
Հոգւովն սրբով: Ոլրով էառ մարմին,  
հոգի և միտք, և զամենայն՝ որ ինչ է՝ ՚ի  
մարդ, ճշմարտապէս՝ և ոչ կարծեօք:

«Չարչարեալ՝ խաչեալ՝ թաղեալ՝  
յերորդ աւուր յարուցեալ. ելեալ,  
յերկինս նովին մարմնով՝ նատաւ ընդ  
աջմէ Հօր:


«Ղալոց է նովին մարմնովն և փա-  
ռօք Հօր, ՚ի դատել զկենդանիս և զմե-  
ռեալս: Ոլոյ թագաւորութեանն ոչ դոյ  
վախճան:

«Հաւատամբ և ՚ի սուրբ Հոգին յա-  
նեղն և ՚ի կատարեալն: Ոլ խօսեցաւ  
յօրէնս և ՚ի մարդարէս և յաւետա-  
րանս: Ոլ էջն ՚ի հարդանան, քարոզեաց  
զառաքեալն: և բնակեցաւ ՚ի սուրբսն:

ԱՆՁԱՅԻՆ և ՚ի մի միայն՝ ընդհան-  
րական և առաքելական եկեղեցի.

Դ մի մկրտութիւն. յապաշխարութիւն. ՚ի թողութիւն մեղաց.

Դ յարտութիւն մեռելոց. ՚ի դատաս-  
տանն յաւիտենից հոգւոց և մարմնոց.  
յարբայութիւնն երկնից, և ՚ի կեանան  
յաւիտենականա:



Խակ որբ ասենն, էրերբեմ։ յորժամ  
աչ էր Ոլոդի, կամ էր երբեմ։ յոր-  
ժամ ոչ էր սուրբ Հոգին, կամ թէ  
յուշեից եղեն, կամ յայլվէ էութենե-  
ասեն լինել զՈլոդին Վաստծոյ և կամ  
զուրբ Հոգին։ Ես թէ փոխուելիք են,  
կամ այլայլելիք, զայնպիսիմ նզովէ կա-

Թուղթիկէ և առաքելական եկեղեցի :

\* \* \*

«Վակ մէք վառաւորեսցուք՝ որ յառաջ քան զյաւիտեանս, Երկիրպագանելով սրբոյ Խրրորդութեանն՝ և միոյ Վստուածութեանն հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամեն :

\* \* \*

Հ. Վ. յէ Հանգանակդ յո՞ր տեղ սահմանեցաւ :

Պ. Ա. իկիոյ ժողովոյն մէջ :

Հ. Ո. յէ ժողովեցան ՚ի Ա. իկիա :

Պ. Ա. րեք հարիւր տասն և ութ Հայրապետը :

Հ. Ե՞նչ պատճառաւ ժողովեցան նո  
քա:

Պ. զի՞րիս հերետիկուր դատավարսե-  
լոյ համար:

Հ. Արիսի հերետիկուութիւնն ի՞նչ  
էր:

Պ. Կա ասէր՝ թէ Հայր Աստված-  
մեծ է քան զԱրդի, ևս թէ՝ Ար-  
դին արարած է:

Հ. Օ հանդանակը ո՞լ բերաւ ՚ի Հայ-  
աստան:

Պ. Արիստակէս հայրապետն:

Հ. Ո՞լ էր Արիստակէս հայրապետն:

Պ. Դրիգոր Լուսաւորչի փոքր որդին  
էր:

Հ. Ախակ մեք վառաւորեսցուքը, ո՞լ  
ասաց:

Պ. Ուղղին Դրիգոր Լուսաւորիչ:

- Հ. Վանի<sup>Հ</sup> գլխաւոր Հաւատալիք կան  
այդ հանգանակի մէջ
- Պ. Խնն՝
- Թ. Կայութիւն և միութիւն Աս.  
տուծոյ :
- Ե. Արրողութիւն Աստուածային  
անձանց :
- Շ. Վրարչագործութիւն Աստուծոյ  
և Կախախնամութիւն :
- Շ. Վարմնառութիւն Աստուած  
որդւոյն :
- Ե. Վիւսանգամգալուստ նորա :
- Գ. Խջումն Հոգւոյն սրբոյ ՚ի Յոր  
դանան :
- Է. Ակեղեցի Վրիստոսի , և խոր  
հուրդք նորա :
- Ը. Յարութիւն մեռելոց :
- Թ. Ա Երջին դատաստան :

iii . Գոյութիւն և Միութիւն Հաստուծոյ :

- Հ . Ա Գոյութիւն և Միութիւն Վաստուծոյ , , ասելով՝ զի՞նչ իմանաս ,
- Պ . Իմանամ՝ թէ Վաստուած կայ և մի է :
- Հ . Վաստուած ո՞վ է :
- Պ . Երկնի և Երկրի ստեղծողն և կառավարողն է :
- Հ . Երկնի և Երկրի ստեղծուած մարդ է , հրեշտակ է :
- Պ . Ո՞չ մարդ է , և ո՞չ հրեշտակ :
- Հ . Վալա ի՞նչ է :
- Պ . զ Վաստուծոյ զի՞նչութիւնը ո՞չ մարդ կարող է իմանալ , և ո՞չ հրեշտակ :
- Հ . Վաստուած ո՞ւր է :
- Պ . Օ օրութեամբ յամենայն տեղիս է , բայց էութեամբ անպարագրելի է :

Հ. Ուստի՞ գիտես՝ թէ Աստուած կայ:  
 Պ. Արարածոց վերայ նայելով , և  
     զԱստուածաշունչ գիրքը կարդալով  
 Հ. Օքնչնչ նշանակէ Արարած բա-  
     ռլու :  
 Պ. «Ատեղծուած , այսինքն՝ յայլմէ<sup>1</sup>  
     (յուրիշէ) Եղած» ,  
 Հ. Ո՞ր բանն ասի արարած ,  
 Պ. Բաց յԱստուծոյ՝ ամենայն ինչ ա-  
     րարած է :  
 Հ. Ո՞րն է Աստուածաշունչ գիրքն :  
 Պ. Հին և նոր կտակարանն է :  
 Հ. Ի՞նչ պատճառաւ կոչի Աստուա-  
     ծաշունչ :  
 Պ. Այն պատճառաւ՝ որ Աստուծոյ  
     շնով (այսինքն՝ ազգեցութեամբ)  
     գրեցաւ , և ոչ մարդկային ուս-  
     մամբ :

Հ. Ո՞յ յք դրեցին զհին Ատակարանը :

Պ. Վարդարէք :

Հ. Օնո՞րը :

Պ. Վարքեալք :

Հ. Վստուծոյ անունն ի՞նչ է :

Պ. «Որ լին» :

Հ. Ուստի գիտես :

Պ. Վստուած ինքն Վովսէս մարդարէն յայտնեց՝ ասելով. «Լս եմ Վստուած Որ լին»(\*):

Հ. Օի՞նչ նշանակէ այդ անունդ :

Պ. «Նշանակէ. «Լս եմ ինքնագոյ, ան փոփոխ, անսկիզբն, անվախճան», :

Հ. Երայեցւոց լեզուաւ ո՞րպէս ասի այդ անունդ :

(\*) Եղ. Պ. 14:

Պ · ԱՅՀՀՄԼԱՅԻ :

Հ · Ուրիշ անուն ևս կարելի՞ է տալ  
Վասուծոյ :

Պ · Կարելի՞ է · զոր օրինակ ՏԵՐ, Վան-  
նակալ, և այլն :

Է · Երրորդութիւն վասուածային անձանց :

Հ · Վասուածային անձինք քանի՞ են :

Պ · Երեք :

Հ · Վասա զնոցա անուանքը :

Պ · Հայր · Ուրդի · Հոգի սուրբ :

Հ · Վասուածային անձինք զանազանին  
՚ի միմեանց :

Պ · Վայու, զանազանին անձնաւորութ :

Հ · Խնչպես :

Պ. Այլ է Հօր անձն, այլ է Որդոյ  
անձն, և այլ է Հոգոյն սրբոյ  
անձն :

Հ. Բնութեամբ ևս զանազանին :

Պ. Ոչ զի են համաբուն, համագոյ,  
համակամ, համազօր, և համափառ :

Ք. Երարշագործութիւն Աստուծոյ և Նախախնա-  
մութիւն :

Հ. «Արարչագործութիւն», ասելով՝  
զի՞նք իմանաս :

Պ. Խմանամ՝ թէ Աստուած յոցէ  
ստեղծեց զերկինքը և շերկիքը, և  
ինչ որ կայ նոցա մէջ :

Հ. «Նախախնամութիւն, ասելով՝ զի՞նք  
իմանաս :

Պ . Խմանամ՝ թէ Աստուած զիւր ա-  
մենայն ստեղծուածքը իւր խնա-  
մովք պահպանեալ է և պահպանէ :

---

Շ . Սարմնառութիւն Աստուածորդւոյն :

Հ . յԱստուածային անձանց որն մար-  
մին առաւ :

Պ . Երկրորդ անձն, որ է Որդին :

Հ . Յումմէ առաւ մարմին :

Պ . ՚Ի սուրբ կուսէն Վարիամայ :

Հ . ՚Ի՞նչ ասել է ՚Վարսին առաւ :

Պ . ՚Վեզ նման մարդ եղեա, ասել է :

Հ . Որդին Աստուածոյ մարմին առնե-  
լէն յետոյ զի՞նչ կոչեցաւ :


Պ . Յիսուս, Քրիստոս, Վեսսիայ, և

Եմմանուել ,  
 Հ . Վարսին չառած զի՞նչ կոչէր :  
 Պ . Բան , Վիածին , Արդի , և այլն ,  
 Հ . Եմմանուել զի՞նչ թարգմանի ,  
 Պ . «Բնդ մեզ Վասուած»:  
 Հ . Ո՞ր ազգի բառ է :  
 Պ . Երբայեցւոց :  
 Հ . «Բրիստոս կամ Վեսսիայ զի՞նչ  
     նշանակեն»:  
 Պ . «Օծեալ»:  
 Հ . Ո՞ր լեզուաց բառք են :  
 Պ . «Բրիստոս՝ Ծունաց բառ է , Վես-  
     սիայ՝ Երբայեցւոց»:  
 Հ . Ի՞նչ պատճառաւ կոչի Օծեալ :  
 Պ . Վայն պատճառաւ՝ որ նա օծեալէր  
     ՚ի հոգւոյն սրբոյ ՚Բահանայալեա-  
     ճմարիտ , ՚Ժագաւոր յաւիտենա-  
     կան , և Վարդարէ ՚ի վերքան զա-

- Ա. Անայն մարդարես :
- Հ. Ուստի՞ յայտնի է՝ թէ նա օծեալ  
էր ?ի հոգւոյն որբոյ :
- Պ. Վարիստոս ինքն ասաց . «Հոգի  
Տեառն ?ի վերայ իմ , վասն որոյ և օծ  
իսկ զիս» (\*) :
- Հ. Օ ի՞նչ նշանակէ Յիսուս , և ո՞ր  
աղջի բառ է :
- Պ. Եշանակէ Փրկիչ , և Երբայեցւոց  
բառ է :
- Հ. Ի՞նչ պատճառաւ կոչ Փրկիչ :
- Պ. Այս պատճառաւ՝ որ նա զմարդ՝  
կային աղջը փրկեց :
- Հ. Յինչէ փրկեց :

(\*) Պ. ուկ. Շ. 48 :

- Պ. ՚Ն դժոխոց և ՚ի ձեռաց սատանայի :
- Հ. ՚Անչո՞վ վրկեց :
- Պ. ՚Աւր չարչարանօք և մահուամբ :
- Հ. ՚Վրիստոս ո՞րքան ժամանակ մնաց  
յերկրի վերայ :
- Պ. ՚Երեսուն երեք տարի, կամ փոքր  
մի ևս աւելի :
- Հ. ՚Օ Ե՞նչ գործեց այնքան ժամանա-  
կի մէջ :
- Պ. ՚Շատ հրաշքներ և բժշկութիւն-  
ներ գործեց, և զ Վրքայութեան  
ճանապարհը քարողեց :
- Հ. ՚Ետոյ ի՞նչ եղեւ :
- Պ. ՚Համբարձաւ յերկինս, և նստաւ  
հօր Վստուծոյ աջ կողմը :



Ե . Սիւս անդամ՝ գոլուստ Վրիստոսի :

Հ . Արկին անդամ գալոց է Վրիստոս  
յաշխառհ :

Պ . Գալոց է :

Հ . Ի՞նչ պէս :

Պ . Խւր Աստուածային զօրութեամբ և  
փառօք :

Հ . Ա ասն Է՛ր գալոց է :

Պ . Ա ասն դատելոյ զկենդանի և զմե-  
ռեալ մարդիկները :

Հ . Ե՞րբ :

Պ . Ճամանակն յայտնի չէ . վասն զի  
Վրիստոս չկամեցաւ յայտնել :

Պ . Ե՞րբ չոգոյն որրոյ ՚ի Յորդանան :

Հ . Հոգին սուրբ Եղբ իջաւ ՚ի Յօր-  
դանան :

Պ . Խնչ ժամանակ Վրիստոս մկրտե-  
ցաւ ՚ի Յօվհաննէս ԱԿրտչէն :

Հ . Խ՞նչ պէս իջաւ :

Պ . Վշաւնոյ կերպարանաւ :

Հ . Խնչն համար :

Պ . Վրիստոսի Վստուածութիւնը  
յայտնելոյ համար, և վկայելոյ՝ թէ  
նա է ճշմարիտ Որդի Վստուծոյ :

Է . Եկեղեցի Քրիստոսի, և խորհուրդք նորաւ:

Հ . Ահ, կեղեցին, ո՞ր ազգի բառ է, և  
զի՞նչ նշանակէ :

Պ . Յունաց բառ է, և նշանակէ Ժողով  
կամ Ժողովուրդ :

չ. Վրիստոսի ժողովութիւն ո՞րն է :  
 Պ. Ամենայն ձշմարիտ քրիստոնեայք :  
 չ. Եկեղեցին Վրիստոսի քանի՛ նշան  
     կամ յատկութիւն ունի :  
 Պ. Չորս , այսինքն՝ Միութիւն, Ար-  
     բութիւն, Բնդհանրականութիւն ,  
     և Առաքելականութիւն :  
 չ. Եկեղեցին ի՞նչ պատճառաւ կոչի  
     «Ո՞չ» :  
 Պ. Այն պատճառաւ՝ որ ամենայն քը-  
     րիստոնեայք միով հաւատով զմի  
     Վրիստոս՝ զմի Աստուած պաշտեն :  
 չ. Ի՞նչ պատճառաւ կոչի «Առըք» :  
 Պ. Այն պատճառաւ՝ որ ամենայն քը-  
     րիստոնեայք մկրտութեամբ սրբեալ  
     են ՚ի մեղաց , և Վրիստոնէական  
     հաւատքն զարբութիւն քարոզէ :  
 չ. Եկեղեցւոյն Վրիստոսի «Բնդ-

- Հանրական,, կոչելոյ պատճառն ի՞նչ է :  
 Պ . Այն է՝ որ քրիստոնէութիւնն շատ  
 ազգաց մէջ տարածեալ է, և մինչ  
 'ի կատարած աշխարհի մնալոց է :  
 Հ . «Առաքելական,, կոչելոյ պատճառն  
 ի՞նչ է :  
 Պ . Այն է՝ որ Քրիստոնէական հաւատ  
 քըն 'ի ձեռն Առաքելոց քարողեցաւ,  
 և Առաքելական բանից վերայ հաս  
 տատեալ է :  
 Հ . Ե, կեղեցին քանի՛ խորհուրդ ունի :  
 Պ . Ե, օթն՝

։ Ակրտութիւն .

Ե . 'Կրոշմ :

Ղ . Ապաշխարութիւն :

Ղ . Հաղորդութիւն :

Է . Ամուսնութիւն :

Ղ. Լարգ կամ Չեռնադրութիւն,  
Է. (Օ)ծումն հիւանդաց :

Հ. Յայդ խորհրդոցդ ո՞յք չկրկնին ,  
Պ. Ակրտութիւնն , Կարոշմն , և Լարգն ,

\* \* \*

Հ. Ալյկրտութիւնն , ի՞նչ ասել է , և  
ի՞նչ նիւթով կատարի :

Պ. Լուացումն ասել է , և կատարի  
ջրով :

Հ. Խնչի՞՞ օրինակ է :

Պ. Վրիստոսի մահուան և թաղման :

Հ. Օի՞՞նչ օգուտ ունի :

Պ. Արբէ զերեխայն յայն մեղաց՝ որոյ  
մէջ ծնեալ է նա :

\* \* \*

Հ. Կարոշմ զի՞՞նչ նշանակէ :

Պ. Կան կամ կնիք :  
 Հ. Արդոյ յոր տեղն դնեն զայդ  
 նշանդ :

Պ. Շակատի կամ այլ զգայարանաց  
 վերայ :

Հ. Ե՞նչ նիւթուլ կատարի :

Պ. Աեռոնով , որ է օրհնած ձեթ :

Հ. Դրոշմի օգուտն ի՞նչ է :

Պ. Օօրացուցանէ զմկրտեալն ըզ-  
 Վրիստոնէական հաւատը պահելոյ,  
 և Վրիստոսի անուանակից առնէ :

\* \* \*

Հ. «Վաշխարութիւն» , զ՞նչ նշա-  
 նակէ :

Պ. Վաշ աշխարել , այսինքն՝ յետոյ  
 լալ :

Ն . Ապաշխարութիւնն ի՞նչպէս պար-  
տի լինիւ :

Պ . Կատարեալ զղջմամբ :

Ն . Ինչով կատարի :

Պ . Ազօթիւք, պահօք, և վճարմամբ :

Ն . Օքնչ օգուտ ունի :

Պ . Որքէ զմարդն յայն մեղաց՝ զոր  
գործեալ է յետ մկրտութեան :

\* \* \*

Ն . «Հաղորդութիւն» բառի նշանա-  
կութիւնն ի՞նչ է :

Պ . Կցորդութիւն կամ մասնակցու-  
թիւ :

Ն . Ի՞նչ պատճառաւ այդպէս կոչի :

Պ . Այն պատճառաւ՝ որ այնու ըզ-  
վը բիստոսի մարմինը և արիւնը ճա-

շակելով՝ կցորդիմք կամ մասնակից  
լինիմք նմա հոգւով :

Հ. Ե՞նչ է հաղորդութեան նիւթն :  
Պ. Քորենոյ հաց, և խաղողոյ գինի :

\* \* \*

Հ. Ամուսնութեան խորհուրդն ո՞րն է :  
Պ. Պօակիլն է :

Հ. Ի՞նչի՞ օրինակ է :

Պ. Վարիստոսի՝ եկեղեցւոյ հետ ան-  
բաժան միաւորութեան :

\* \* \*

Հ. Կարգն ի՞նչ է :

Պ. Ե՛ հոգեոր պաշտօն, որ Զեռնա-  
դրութիւն ևս կոչի :

Հ. Ե՞նչ պատճառաւ կոչի «Զեռնա-

Դրութիւնն :

Պ . Այս պատճառաւ որ ձեռք դնել  
լով կատարի :

Հ . Ո՞վ ունի իշխանութիւն ձեռնա-  
դրելոյ :

Պ . Եպիսկոպոսն :

Հ . Քանի աստիճան ունի կարգն :

Պ . Եօթն՝

Ա . Կռնապանութիւն :

Բ . Կալրութիւն :

Գ . Երդմեցուցութիւն :

Դ . Զահընկալութիւն :

Ե . Լիսասարկաւագութիւն :

Զ . Արկաւագութիւն :

Է . Քահանայութիւն :

Հ . Եպիսկոպոսութիւնն ի՞նչ է :

Պ . Ե .՝ գլխաւոր քահանայութիւն ,  
ուստի կոչի և Վահանայապետու-  
թիւն :

Հ . Ա լաթուղիկոսութիւնն ի՞նչ է :  
Պ . Ե .՝ գլխաւոր եպիսկոպոսութիւն ,  
ուստի կոչի և Ապիսկոպոսապե-  
տութիւն :

Հ . Ա պրոգապետն ի՞նչ աստիճան ունի :

Պ . Վահանայութեան աստիճան ունի .  
բայց պարտաւոր է ևս Ուսուցիչ  
լինել , այսինքն՝ քարոզել ժողո-  
վրդեան զլուսուածային պատ-  
գամբը :



Հ . Հիւանդաց ( )ծումն ո՞րն է :

Պ . Ա յն օծումն է՝ որ հիւանդաց  
համար սահմանեալ է :

Հ. Խնչով կատարի :  
 Պ. Աղօթիւք, և օժմամբ օրհնեալ  
 իւղոյ :  
 Հ. Առանց օժման իւղոյ չէ կարելի  
 զայդ խորհուրդդ կատարել :  
 Պ. Այս է, որպէս կատարէ Հայոց  
 եկեղեցին՝ միայն քահանայից ա-  
 ղօթիւք :

---

Ը. Յարութիւն մեռելոց :

Հ. Այս արութիւն մեռելոց, ասելով  
 զի՞նչ պարտ է իմանալ :  
 Պ. Պարտ է իմանալ՝ թէ մեռեալ մար-  
 դոց մարմինքն վերջին դատաստա-  
 նիյօրն՝ իւրեանց հոգւոց հետ միա-  
 ւորելով՝ յառնելոց են Աստուծոյ  
 հրամանաւ :

---

Ե + Ա Ե Ր Ձ Ի Ն Պ ա տ ա ս տ ա ն :

Հ . Օ վ ե ր ջ ի ն Պ ա տ ա ս տ ա ն ւ ո վ ա ռ ւ  
ն ե լ ո ց է :

Պ . Տ է ր ն մ ե ր Ք ի ս ու ս Վ ր ի ս ս ո ս :

Հ . Վ ՞ Ն չ պ է ս :

Պ . Օ ա ր դ ա ր ն ե ր ը ՚ ի մ ե ղ ա ւ ո ր ա ց բ ա շ  
ժ ա ն ե լ ի ն յ ե տ ո յ , ա մ ե ն ա յ ն մ ա ր դ ո ց  
վ ա ր ձ կ ա մ պ ա տ ի ժ տ ա լ ո ց է՝ ը ս տ  
ի ւ ր ե ա ն ց գ ո ր ծ ո ց :

Հ . Ո վ ւ ր լ ի ն ե լ ո ց ե ն ա ր դ ա ր ը ն , և ո ւ ր  
մ ե ղ ա ւ ո ր ք ն :

Պ . Վ ա ր դ ա ր ք ն լ ի ն ե լ ո ց ե ն յ ե ր կ ի ն ի ց ա ր  
ք ա յ ո ւ թ ե ա ն , և մ ե ղ ա ւ ո ր ք ն ՚ ի դ ւ ժ  
ժ ո խ ս :

Հ . Վ ա ր ք ա յ ո ւ թ ի ւ ն ն ի ՞ ն չ է :

Պ . Վ ա յ ո ւ թ ի ս ի ե ր ա ն ա ւ է տ վ ի ճ ա կ կ ա մ

կեանք մի է, զոր ոչ աչք է տեսած,  
ոչ ականջ է լսած, և ոչ լեզու  
կարէ պատմել :

Հ. Դաժովսքն ի՞նչ է :

Պ. Ե. յնպիսի չարաչար վիճակ մի է,  
որ լի՛ է ամենատեսակ տանջանօք և  
թշուառութեամբք :

ԳԼ. Բ.

ՅԱՅՍ :

Հ. Օ ի՞նչ ինչ պարտիմք յուսալ  
յլուսուծոյ :

Պ. Պարտիմք յուսալ վայելելոյ զայն  
ամենայն բարիքը՝ զորս խոստացեալ  
է յլուսուած իւր սիրելեացն :

Հ. Ո՞րպիսի բարիք խոստացեալ է :

Պ. Այստացեալ է կեանք, հանգիստ,  
և երանութիւն անվախճան :

### ԴԼ. Գ

Սէր :

Հ. Վստուծոյ սէրն զի՞նչ պահանջէ՛  
՚ի մարդոյ :

Պ. Պահանջէ՛ զնորաօրէնքը կամ պա-  
տուիրանքը պահել :

Հ. Օ ի՞նչ հրամայեն Վստուածային  
օրէնքն :

Պ. Խ չար գործոց հեռանալ, և գործել  
զբարի :

Հ. Օրէնքնքանի տեսակ է :

Պ. Երկու տեսակ է, ընական, և ՚Կրա-  
կան :

\* \* \*

Հ . Բնական օրէնքն ո՞րն է :

Պ . Արդոյ խղճմտանքն է :

Հ . Խղճմտանքն ինչո՞ւ համար կոչ  
օրէնք :

Պ . Այսոր համար՝ որ այնու կարէ  
մարդ ճանաչել զբարին և զչարն :

Հ . Ինչո՞ւ համար կոչի Բնական :

Պ . Այսոր համար՝ որ ՚ի բնէ՝ այսինքն  
՚ի ծննդենէ տպաւորեալ է ամեւ  
նայն մարդոյ սրտի մէջ :

Հ . Ի՞նչ այլ օրէնքներ ծնան ՚ի Բնա-  
կան օրինաց :

Պ . Ամենայն քաղաքական և դատաստա-  
նական օրէնքներ :

Հ . Շորո՞ց հաստատեցան այն օրէնք  
ներն :

Պ . Շօրինաւոր ինագաւորաց և յիշ-  
խանաց :

Հ . Պարտական ե մք և այն օրինաց հնա-  
զանդիլ :

Պ . Այս , ինչպէս Աստուծոյ հրամանի :

\* \* \*

Հ . Դրական օրենքն ո՞րն է :

Պ . Այս է՝ զոր Աստուծոյ գրով  
տուաւ :

Հ . Ի՞նչ պատճառաւ կոչ ա՞յլա-  
կան , :

Պ . Այս պատճառաւ՝ որ յետ ինա-  
կան օրինաց գրուեցաւ :

Հ . Եքանիս բաժանի Դրական օրեն-  
քը :

Պ . Երկուս , այսինքն՝ ՚ի Հին , և ՚ի  
Եր :

\* \* \*

Հ . Հին օրէնքն ո՞րն է :

Պ . Այն է՝ զոր Աստուած Առվակս  
մարգարէի ձեռամբ տուաւ :

Հ . Ո՞ր տեղ :

Պ . Ի Անա լերին :

Հ . Երբ :

Պ . Խարայէլացւոց յէրդիստոսէն ելա-  
նելէն յիսուն օր յետոյ :

Հ . Վանի տեսակ էր Հին օրէնքն :

Պ . Երեք տեսակ էր, այսինքն՝ Բարո-  
յական, Ծախական, և Դատաստա-  
նական :

Հ . Այժմ խափանեալ են այդ օրէնք-  
ներդ :

Պ . Ծախական և Դատաստանական օ-  
րէնքներն խափանեալ են Քրիստո-  
նէից միջ :

Հ . Բարոյականնքն չեն խափանեալ :

Պ. ԱՇ. վասն զի վերստին հաստատեցան ՚ի քրիստոսէ :

\* \* \*

Հ. Այժք են Աարոյական օրէնքն :

Պ. Աստուծոյ տասն Պատուիրանքն են :

Հ. Յինչի վերայ գրեալ էին տասն Պատուիրանքն :

Պ. Յերկու քարեղէն տախտակաց վերայ :

Հ. Ասա զտասն Պատուիրանքը :

Պ. ա. Այի եղիցին քեզ այլ աստուածք՝ բաց յինէն :

Է. Այի արասցես կուռս :

Է. Այի առնուցուս զանուն Աստուծոյ քո ՚ի վերայ սնոտեաց :

Է. Յիշեա որբել զօր շաբաթու :

- Ե. Օյատուեան զհայրքու և զմայր,  
 զ. Ո՞ի սովանաներ :
- Է. Ո՞ի շնար :
- Ը. Ո՞ի գողածար :
- Թ. Ո՞ի սուտ զիայեր :
- Ժ. Ո՞ի ցանկանար տան ընկերիքու,  
 և այլն :
- Ճ. Օյենչ հրամայէ Աստուած ԱՅԻ  
 Եղիցինքեզ այլ աստուածք՝ բաց  
 յինենա, ասելով :
- Պ. Հրամայէ՝ որ բաց ՚ի միոյն Աստու-  
 ծոյ՝ այլ աստուած չճանաչեմք :
- Ճ. Ո՞ի արացես կուռսա, ասելով  
 զենչ հրամայէ Աստուած :
- Պ. Հրամայէ՝ որ կուռք չշինեմք,  
 կուռք չպաշտեմք :
- Ճ. Օյենչ նշանակէ Ալուռքու բառդ :
- Պ. Երարէ՝ ՚ի փայտէ՝ կամ յայլ

- Նիւթոց շինեալ պատկեր :
- Հ . «ԱՐԵ առնուցուս զանուն Վատուծոյ քո ՚ի վերայ մնանեաց, ի՞նչ ասել է :
- Պ . Վատուծոյ անուամբ սցինչ բաների համար մի՛ երդուիր :
- Հ . «Ը աբաթ, ո՞ր աղգի բառ է, և զի՞նչ նշանակէ :
- Պ . Երբայեցոց բառ է, և նշանակէ հանգիստ :
- Հ . «Քրիստոնեայք պարտաւո՞ր են պահելց զլաբաթ օրը :
- Պ . Ո՞չ . շաբաթի տեղ՝ պարտաւոր են պահելց զլիւրակէ օրը :
- Հ . Ո՞րն է կիւրակէ օրն :
- Պ . Վշխարհի ստեղծման առաջին օրն է՝ վասն որոյ կոչի նաև Վիաշաբաթ :
- Հ . Ո՞յք սահմանեցին շաբաթի տեղ

զլիւրակէն պահել :

Պ . Առաքեալք :

Հ . Երբ :

Պ . Օկնի Քրիստոսի համբարձման :

Հ . Խնչու համար :

Պ . Այնոր համար՝ որ այն օրը յարեաւ  
Քրիստոս, և այն օրը իջաւ Հոգին  
սուրբ ՚ի վերնատունն :

Հ . Հայոց բառ է լիւրակէ :

Պ . Այլ Հունաց բառ է :

Հ . Օլոնչ թարգմանի :

Պ . Տէրունական :

Հ . Ենչպէս պարտ է սուրբ պահել  
զիւրակէն :

Պ . ՚Ի ծառայական գործոց ազատ մնաւ  
լով, և հոգեշահ գործոց պարա-  
պելով :

Հ . ՚Օ առայական գործքն ոյք են :

- Պ. Արմենաւոր շահուց համար եղեալ  
աշխատութիւնքն են .
- Հ. Ոյք են հոգեշահ գործքն :
- Պ. Վասոքիկ են . յեկեղեցի գնալ, աղօ-  
թել, քարոզ լսել, հոգեոր գիրք  
կամ Վւետարան կարդալ, շարա-  
դրել, դաս սերտել, և այլն :
- Հ. «Պատուեա զհայր քո և զմայր, ա-  
սելով՝ զի՞նչ հրամայէ. Վստուած :
- Պ. Պատուել զմեր հոգեոր և մար-  
մնաւոր ծնողքներս :
- Հ. Ոյք համարին մեզ հոգեոր ծնողք :
- Պ. Աեր բարերարքն, իշխանքն, վարժա-  
պետքն, քահանայքն, և այլն :
- Հ. Վնչպէս արժան է պատուել  
զնոսա :
- Պ. Իատարեալ սէր և հնազանդութիւն  
ցուցանելով նոցա, և զնոցա երախ-

- Թիբը չմոռանալով :
- Հ. Աստուած զի՞նչ հրամայէ ԱՄբ  
սպանաներու, ասելով :
- Պ. Ուեր կամքը պատճառ չլինիլ՝ ոչ ու  
լոց և ոչ մեր մահուան :
- Հ. ԱՄբի շնար, մի՛ դողանար, մի՛ սուս  
վկայերուասելով՝ զի՞նչ հրամայէ ԱՄ.  
ուած :
- Պ. Շ ան նման անամօթաբար մեղաց  
չհետեւիլ, չգողանալ, սուս բան  
վկայ չլինիլ :
- Հ. ԱՄբի ցանկանար տան ընկերի քա.  
ասելով՝ զի՞նչ հրամայէ Աստուած :
- Պ. Ուեր ընկերաց ունեցածների ամ.  
նեխն աչք չդնել, և չլափշուակել :

\* \* \*

- Հ. Առ օրէնքն ո՞լն է :
- Պ. ՚Ի ՚Ի՞րիստուէ աւանդեալ և յլու<sup>1</sup>  
սպքելոց քարտզեալ և զրեալ պա-  
տուիրանքն են :
- Հ. Ո ինչ հըմայեն ՚Ի՞րիստուի պա-  
տուիրանքն :
- Պ. ՚Ի մեղաց և ՚ի մոլութեանց զզու-  
շանալ, և առաքինուի գործել :
- Հ. Ո՞ւղքն քանի տեսակ է :
- Պ. Երկու . Ոկզբնական, և ՚Երգոր-  
ծական :

\* \* \*

- Հ. Ո՞ւն է Ոկզբնական մեղքն :
- Պ. Վշամային մեղքն է, որ է անհնա-  
զանդութիւն :
- Հ. Վշամ ի՞նչ ըստի անհնազանդ  
եղեւ :

Պ. Աստուած պատուիրեալ էր նմա  
որ բարւոյ և չարի գիտութեան  
ծառոյ պաղէն չուտէ . բայց նա  
չինազանդելով կերաւ :

Հ. Ե՞նչ տեսակ ծառ էր այն :

Պ. Ու յայտնի , որովհետեւ Աստուածաշնչի մեջ յանուանէ գրած չէ :



Հ. Երգործական մեղքն ո՞րն է :

Պ. Այն է՝ զոր մեք յետ մկրտութեան  
գործեմք :

Հ. Եքանիս բաժանի :

Պ. Երկուս . այսինքն՝ ՚ի Ամահուչափ  
և ՚ի Երելի :

Հ. Այք են Ամահուչափքն :

Պ. Ծանր ծանր մեղքերն են :

Հ . Վ, ԵՐԵՄԻՔՆ Ո՞յք ԵՆ ,  
Պ . ՓՈՔՐ և ԹԵԹԱ մԵՂՔԵԼՆ ԵՆ .

\* \* \*

Հ . ԳԱՂԻԽԱՌՈՐ ՄՈՂՈՒԹԻՒՆՔՆ ԲԱՆԻ՞ ԵՆ .  
Պ . ԼՅՈՒԹՆ՝

Ա . ՀԱՊԱՐԱՏՈՒԹԻՒՆ .

Բ . Վ, ԱԽԱՆՃ :

Գ . ԲԱՐԿՈՒԹԻՒՆ :

Դ . ԾԱՌՈՒԼՈՒԹԻՒՆ :

Ե . ՎՃԱՀՈՒԹԻՒՆ :

Զ . ՈՒՂՂՐԱՄՈՂՈՒԹԻՒՆ :

Է . ԲԱՂՁԱԽՈՀՈՒԹԻՒՆ :

Հ . ՀԱՊԱՐԱՏՈՒԹԵԱՆ ԴԵՄ զԵՒՆչ առա-  
քինուԹԻՒՆ պարտ է գործել :

Պ. Խոնարհութիւն :

Հ. Ե, ախանձու դէմ :

Պ. Եղբայրակիրութիւն :

Հ. Բարկութեան դէմ :

Պ. Հեզութիւն և Համբերութիւն :

Հ. Ծառլութեան դէմ :

Պ. Մքիութիւն :

Հ. Մգահութեան դէմ :

Պ. Ողորմածութիւն :

Հ. Որկրամոլութեան դէմ :

Պ. Բարեխառնութիւն, այսինքն՝ ուտելոյ և խմելոյ չափաւորութիւն :

Հ. Բղջախոհութեան դէմ :

Պ. Ողջախոհութիւն կամ Ճուժկալութիւն, զոր աղօթիւք պարտիմքը ընդունել յԱստուծոյ :



- Հ. Պանի՞մ կերպ է Վ. Ղօթքն ,  
Պ. Երկու . Հրապարակական , և Վ.  
ռանձնական :
- Հ. Ո՞րն է Հրապարակականն :
- Պ. Վ. յն է՝ որ յեկեղեցւոյ մէջ՝  
բազմութեամբ՝ այլոց հետ լինի :
- Հ. Վոանձնականն ո՞րն է :
- Պ. Վ. յն է՝ զոր մէք ՚ի մէջ խցի մենակ  
կամ առանձին կատարեմք :
- Հ. Վ. ղօթից գլխաւորն ո՞րն է :
- Պ. Տէրունական աղօթքն է , այսինքն՝  
“ Հայր մերն ” :
- Հ. Ի՞նչ պատճառաւ “ Տէրունական ”,  
կոչի այն աղօթքն :
- Պ. Վ. յն պատճառաւ՝ որ ՚ի Տեառնէ  
մերմէ Վրիստոսէ տւանդեցաւ :
- Հ. Պանի՞մ խնդրուածք կան այն աղօ  
թից մէջ :

Պ. Եղօթն. որ է սցսղես

Թ. Հայր մեր՝ որ յերկինս ես՝ սուրբ  
եղիցի անունը քո,

Ի. Եղեցիցէ արքայութիւնքու,

Ղ. Եղիցին կամքք քո՝ որպես յեր  
կինս, և յերկրի,

Ռ. Օ հայ մեր համապաշորդ սուր  
մեր այսօր,

Ե. Խոնդ մեր զարգացիս մեր, որ  
ովքս և մեր թողումը մերոց պարտա  
պահաց,

Ղ. Եւ մի՛ տանիք զմեր ՚ի փոք  
ձութիւն,

Ի. Ա. Ա վրկեա զմեր ՚ի չարէն,

Օ ի քո՛ և արքայութիւն և զօրու  
թիւն և ժամաք յախեանս, ամէն,

ՅԱԼԵԼ ԱԼՎՈՅԲ.

Ա ԵՐԹԻՒԹ Ը ՆՈՐՀԱԼՄ

Վանք չափու

Ի զիմաց Հայկական Տառից :


Ա:

Ա յին տռաջին ըդ քեզ, տըզայ,  
Հանեւ յիմաստըն գերակայ,  
Երբորդութեանըն մերձակայ,  
Ենիս երիւք ստեղամբը նորա :

Այսն ամըսկիզբն ասէ զԱստուած,  
 Ենեղ բնութիւն՝ ոչ արարած .  
 Յերիս անձինչա բաժանած ,  
 ՚Ի մի բնութիւն միաւորած :

## Բ.

Աենըն բնաւից ասէ անձառ ,  
 Հասման մըտաց դոլ անհընար .  
 Օ Ոլրդոյ ծընունդն անեղաբար ,  
 Օ Հոգոյ բըղիսումն անհատաբար :




Աենըն բանից , ասէ , չարաց ,  
 Աանձեա զլեզուդ վասն ընկերաց ,  
 ՚Ի բերանոյ քո հան ՚ի բաց .

Օ խօսա աղտեղիս նախատանաց ,  
 Եաւ ՚ի բան բամբասանաց՝  
 Դիր պահապան քոյոց շըրթանց .  
 Օ ի ապրեսցիս դռւ ՚ի մեղաց ,  
 Եւ յանաչառ դատաստանաց :

¶.

Պ ակմըն գանձէ քեզ բիւր բարի ,  
 Դրելով զիմաստս ՚ի տախտակի .  
 Օ նա արկ ՚ի քոյդ պարանոցի ,  
 Որ պատուական է քան զոսկի :



Պ ակմըն գըրովք Աստուածային ,  
 Ուսուցանէ խրատել լեզուին .  
 Բանք քո նոքօք յարդարեսցին ,

Վարձքը նոցին հետևեսցին ,  
 Եւ մի ընդդեմ կար հրամանին ,  
 Այլ հնազանդեաց պատուիրանին .  
 Եւ ոտըք քո ոչ մոլորին ,  
 'Ի ճշշմարիտ ճանապարհին .

## Դ.

Վայն դաւանէ զերլորդութիւն ,  
 Երեք անձինք , և մի բնութիւն .  
 Ոչ միութեամբ ՚ի խառնութիւն .  
 Ոչ բաժանմամբ յօտարութիւն .



Վայն դատողին երկնաւորի ,  
 Կորատէ ըզքեզ սպասել յերկրի .  
 Եւ ՚ի մարմնոյ քո վախճանի ,

Հոգւոյդ կոչմանըն տէրունի .  
Ո՞նալով լինել յանկարծակի ,  
Նըման գողոյ ՚ի գիշերի :

Ե .

Եցն երգե միշտ յականջըս քոյ ,  
Տալ ըզհամար պարտուցըն քոյ .  
Որպէս մանկունկը ուսման գլուց ,  
Ռզտախտակին համար տալոյ ,  
Կամ որք վեհից տընտեսք գործոյ ,  
Վո՞ի զհամար պահանջելոյ .  
Քանզի տընտես ես քո հոգւոյ .  
Եւ պարգևացն Աստուածայնոյ :

Օ

Օ այն զռւգակից սըմին ծանիր ,  
 Որ միշտ ասէ՝ թէ զօրացի՛ր .  
 'Ի խորքընոյ մահու զարթի՛ր ,  
 Եւ 'ի յանձին քում զգաստացի՛ր :  
 Յանցաւորացըս մի՛ խաբիր ,  
 Յանանց կենացըն մի՛ զըրկիր .  
 Օ արդարութիւն այժմ ըզգեցի՛ր .  
 Եւ անդ փառօք պայծառացի՛ր :

Եւ

Ան էապէս մեզ քարոզէ  
 զնոր իշխան, ուսեալ 'ի Վոլխուէ ,  
 Ան Աստուած էր 'ի սկըզբանէ ,  
 Եւ ոչ եղեալ 'ի յումեքէ :

Բ:

Պթն ընդ իշխն հօր զուգական  
օլորդի ասէ համաբնական .  
Ի Յովհաննէ ուսեալ զայս բան ,  
Որ որոտաց յիշետարան :



Պթն ընկերի քո պատահել  
Բարեաց իրաց ինչ յաջողել ,  
Կորատէ ըզքեզ՝ մի՛ յաչաղել .  
Մի՛ մախանօք ըզքեզ այրել :  
Այլ թէ կամիս , ասէ , հանգչել ,  
Եւ Աստուծոյ հաճոյ լինել ,  
Դու գոհութիւն տուողին յաւել ,  
Այսմ՝ որ գիտէ հաւասարել :

Ձեզն թարգմանէ մեզ տիրաբար  
 Օչոգւոյն բըղլեռումն անքըննաբար,  
 ինէ՞ի հօրէ է յատկաբար,  
 Վոնու յիլրդւոյ անձառաբար :



Ձեզն թագ, ասէ, արքունական  
 կամ պետութիւն իշխանական  
 ինէ ընկալցիս դու ըզմարդկան,  
 Ա՞ն համարիր .քեզ սեպհական :  
 Վայ ըստ հարանց .քոց, որ անցան,  
 Դանիր ըդ.քեզ ծաղկվ նըման .  
 Եւ մի՛ լինիր ամբարտաւան,  
 Վայ .քաղցը և հեզ խոնարհական :

Ժ.

Ճեն ժուժկալ լեր, ասէ, յուսումն  
ինէ և ապտակ առնուս յարբումն,  
Հայեաց յոսկին՝ որ ՚ի քրայումն,  
Օք ծեծելով առնու զմաքըսումն :

Ի.

Ճնն իսկաղէս, ասէ, բանին  
՚ի յուընչէ ստեղծեալ զերկին.  
Հաղորդ ընդ հօր է և հոգին,  
Որով եղեալքս ամէն լինին :

Լ.

Ճիշ լուր, ասէ, հօր քո խրատու.  
Լեր օրինաց մօր քո հըլու :  
Ու արդապետին հնազանդ կաց դու,  
Յորմէ շահիս բան խրբատու :

իւնն լըռել, վարդապետէ,  
 'ի ցաւագին բարկութենէն,  
 Եւ յանհանգիստ սըրտնութենէ,  
 Հանգչել, ասէ, 'ի չար ախտէն:  
 Ռնկալ ըզոյն և 'ի Տեառնէն,  
 Յերանութեանց հեղոց բանէն,  
 'Օանիր՝ թէ մերձէ, որ դատէն,  
 Հատուցանել քեզ փոխարէն,

Ա.

Խէն իըրատէ ընդ սուրբ գլուց  
 Խաղալ, և մի՛ ընդ անմիտ տղայոց.  
 Եւ ընդ բանից մեծ իմաստնոց,  
 Փոխան վիժմանցն ըշ չար յիշոց:



Յօն

Յայն ծովու պէս, ասէ, զիմաստ,  
Որ ՚ի յերկնից իջեալ է աստ.  
Բաց ըզհոգւոյ քո զառագաստ,  
Յըթել մըտօքըդ լե՛ր պատըաստ.

Ա.

Աենըն կենաց զանցաւորէ,  
Կըրկին դըրամբք քաղաք ասէ,  
Բնդ մին մըտեր մերկ յարգանդէ,  
Բնդ միւսն ելցես մերկ յաշխարհէ.  
Երդ զի՞նչ օգտիս դու ՚ի շահէ,  
՚Ի քաղաքիս այս վաճառէ,  
Յորժամ ՚իդրունսըն կողոպտէ  
Վահն, որ կենաց թըշնամին է.

2.

Հայն հայեաց յոյժ, ասէ, բանիս,  
 Եւ մի՛ զբաղեր միշտ՝ ՚ի մնոտիս,  
 Ա՞ի՛ յապաղեր դու՝ ՚ի չարիս,  
 Այլ փոխոխեա վոյթ՝ ՚ի բարիս :  
 Օ՞ի յորժամ ո՛չ գիտես, կոչիս,  
 Եւ ըստ գործոց քոց պահանջիս.  
 Եւ թէ չունիս պատասխանիս,  
 Քանիոյս խաւար բանդ արկանիս :

2.

Հայն ճայն տայ քեզ, մանուկ ուշիմ,  
 Խեւ ականջօք լուր ըզբանս իմ .  
 Ուսման գըրոց լե՛ր մըտերիմ,  
 Եւ բարձրանաս դու՝ ՚ի յերկին :

¶

՚ ՚ ատն ղեկ առնուլ քեզէն ճարտար  
 ՚ աւել յոյց ծով տայ հըմնաբար .  
 ՚ սէ , յուղել ալեացն յերկար՝  
 ՚ նդդէմ կացցես հըզօրաբար :  
 ՚ արեա զհոգ ոյդ նաւ անդադար  
 ՚ հոգւոյն թևովք առ ՚ի հանձար ,  
 ՚ օ ՚ի հասուսցես սնդորրաբար  
 ՚ յանքոյթ տեղին խաղաղաբար

Ճ.

՚ ՚ էն ճանաչել տայ ըզհանձար  
 ՚ ստ ՚ սակաց բանին յարմար ,  
 ՚ լով ՚ խրատիս լինել արդար ,  
 ՚ ս ՚ ստուծոյ հաճոյարար :



Ճեն հաստիքայթ առ ՚ի որուեղ,  
 Վուե, ծագեան լուսոյ համզեւա,  
 Օքանս բարիս հեղ ՚ի լեզուեղ,  
 Օսկորմնաթիւն ՚ի ձեռանեղ,  
 Ռայց յԱրարչեն քեղ պարզեւեղ,  
 Ո՞ի վասթարաց վասներ յանովեւա,  
 Խեւ ու , վաճար առա ՚ի յանձնեղ,  
 Ըորժամբ խընդրէ ՚ի յառաջեղ,

## W.

Ո՞ենը մերժեան, առե, ՚ի քեն  
 Օսխառը մեղաց՝ որ ՚ի չարեն,

## Q.

Հին յիշեւ առյ զմանկուն երիս  
 Օտշակերտեալս ՚Կանիւլիս,


Ուե սոցա պէս , առէ , մոլբրիս ,  
Ե Տրոյ մեղաց բլնաւ չոյթիս ,

Ա .

Ա յան նայեաց առէս , առէ , զ Յովակի  
Օ Հրեշտակաց նըմնան ՚ի դէալ .  
Պահեան ե դու զ քեզ անվըրեալ ,  
Ճեզիստուհայն ախտից անդէալ .

Շ .


Շ այն շընօրհաց , առէ , սիրող ,  
Ե Եր իմաստոցըն հետեալ .  
Արք առ իմաստըն փախագող ,  
Վինչե ՚ի մահ եղեն ճըդնող ,



Պ այն շատ, ասէ, ով ծերունիդ  
չնացեալ ալեօք, կալ յաշխարհիդ.  
Ժամ է գառնալ այժմ ՚ի հոգիդ,  
Այնչ դեռ ՚ի ձեռս է քեզ բարիդ.

## Ա.

Ոյն ուսուցէ քեզ դիւրութեամբ՝  
Եւ աստ և անդ լի բարութեամբ,  
Ոիրել զլցատուած չշմարտութեամբ,  
Եւ զքո ընկերն ըստուգութեամբ,  
Ուրժել ըզ չարն ատելութեամբ,  
Գլըրկել զբարին սիրելութեամբ.  
Պահել զհոգի քո սըրբութեամբ  
Եւ անհըսլարտ խոնարհութեամբ.




Q.

Հայն չար ասէ զագահութիւն,  
օկ շատ մեղաց է ծնելութիւն.  
օկ ՚ի նմանէ է սպանութիւն.  
՚ի աւար և գերութիւն.  
Անտի սկըսեալ է դողութիւն,  
Եւ անիրաւ դատողութիւն.  
՚ի յայնմանէ վաշխառութիւն  
Եւ ըդմեանս ատելութիւն :

¶.


¶ Են պատուիրէ պարկեշտ լինել,  
Ո՞ի զորովայնը իսրազել,  
Ո՞ի ըզգինի բլնաւ սիրել,  
Ո՞ի տարաժամ զբերանդ յածել,



Պէս պատուիրէ կալ անքամբաս  
 'Ե յայս չարեաց, յորում թէ կաս.  
 Օ ի մի՛ հոգւոյդ առնես վընաս՝  
 'Ե ձախակողմըն կալով դաս:  
 Եւ մի՛ նախատ ՚ի կեանըս յայս,  
 Յորում զարժանն ումեք ոչ տաս:  
 Տուր զանցաւորդ՝ զոր ըստանաս,  
 Եւ առ զանանցըն՝ յոր դընաս:

## 9.

Պէս ջանիւ հաս, ասէ, շնորհաց,  
 Ո՞ւ ծոյլ կենար և դեգերած.  
 Ո՞ւ սիրեր զքուն դանդաղանաց,  
 Ո՞ւ արթնութիւն ըզբաղանաց:



Այս ուահիւ զքեզ ՚ի բարձունս  
 Հանէ հոգւով ընդ իմաստունս .  
 Ուէ զանձըն քո տաս ՚ի ճըգունս ,  
 Ելցես իմաստը գերաբունս :



Այս ըռամփկ արանց հանուրց  
 Անախանձել , խոստէ , վարուց .  
 Եւ գինարբուաց երգոց պարուց  
 Ո՞ի հաղորդել ըկտի բարուց :  
 Օ ի վոխանակ աստէն ծաղուց ,  
 Լոծումն և լազ է անդ նոցունց  
 Ի նդ մեծատանն այնմիկ դասուց ,  
 Որ փափագէր կաթիլ մի ջուրց :



Ա.

Աէն սիրող լեռ, ասէ, ուսման,  
 Յաւել ՚ի քեզ զփոյթ և ըզջան,  
 Այլ և զխորհուրդըս մաքրական,  
 Որով հոգիքըն զօրանան :

Ա.

Ա եւն վարք ; ասէ, պիղծ անառակ  
 Տեառըն կամացն է հակառակ .  
 Եւ որ ՚ի յայս սէր է համակ ,  
 Եւ Վատուծոյ սիրոյն դիմակ ,  
 Էցդ մի՛ ըմբեր խիստ ախորժակ  
 Օ անցաւորիս սիրոյ բաժակ .  
 Այլ վոփոխեան զմբորատեսակ  
 Յանապական սէրըն յլստակ :

**Հիւն տայ ասել բան ծայրագոյն**  
 Ա ասըն Բանին իմանալոյն,  
 Տեառըն վառաց խոնարհելոյն,  
 Ո՞ինչե խաչի համբերելոյն .



**Հիւն տերանց և Կշիանաց**  
 Խրատ ընծայէ իմաստութեանց,  
 Ոէ մի՛ սիրէք ժողովել գանձ,  
 Վ. յլ ըզժողով բարի արանց :  
 Ո զմբտերիմսըն տէրութեանց,  
 Եւ զհետեռողսըն քաջութեանց ,  
 Որք վասն մեր ՚ի մահ անձանց ,  
 Իսմաւ դիմեն որպէս ՚ի գանձ .

¶.

Ծէն տառ չէ բանի սկըսուած,  
 Այլ ակամայ բըռնաղբօսած,  
 Բայց դու զականջդ առ ընթերցուած,  
 Խէ զի՞նչ խօսի՝ ըզմըտաւ ած,  
 Ոիրեա բոլոր սըրտիւ զլստուած,  
 Եւ օրինաց նորա խնամ ած,  
 Օ հոգիդ պահեա յախտից մաքրած,  
 Եւ ՚ի մեղաց միշտ լըւացած :

Յ.

Ծյն ցընծութիւն մեզքարողէ,  
 Օ միշտ կենդանւոյն յարութենէ,  
 Եւ զ յարութիւն մեր հաստատէ,  
 Կըմին նըման՝ յորժամ գայցէ :

Ոյն ցուցանէ միւս քան խըրատ,  
 Ո՞ւ ՚ի չարեաց առնէ ազատ,  
 Ո՞ւ ՚ի նախանձիր բընաւ ընդ մարդ,  
 Եւ մի՛ նենգեր զընկեր քո գաղտ,  
 Ո՞ւ Վատուծոյ ծածկեալն է յայտ,  
 Եւ հատուսցէ փոխան քեզ դատ,  
 Լամ ՚ի յաստի կեանքս անընդհատ,  
 Լամ ՚ի վերջին օրն հաստատ .

## Ե.

Խիւնն յօդական միայն է տառ,  
 Բայց զոր յօդէ՝ քեզ խըրատ առ .  
 Յորժամ մեղաց դառըն պատառ  
 Քեզ երեի քաղցր և դիւրառ,  
 Կախ քան զուտել նորա ՚ի սպառ  
 Յիշեա զամօթն և ըզպատկառ .  
 Եւ շիջանի բոցն որ ՚ի վառ,  
 Եւ զգօնանայ միտքըդ յամառ .

Φ·

Φիւրըն փառաց է քեզ քարոզ,  
 Այս խրատական բանից տալոյս,  
 Ում թէ ուրբաիւ լինիս ՚ի յոյզ  
 Եւ տաս աճեւ եբրեւ ըզբոյս:  
 Օ հոգիդ մաքուր պահէ և լոյս  
 ՚ի յաշխարհիս խաւարելոյս,  
 Եւ հանդերձեալ կենաց տայ յոյս,  
 Պլսակ առնուլ քեզ ընդ հաճոյս:

Վ·

Վիւն Վրիստոսի՝ ձեռվն իւրով  
 Օ մեզ յորդորէ խաչակցելով,  
 Օ ի և փառաց նորա յուսով  
 Հաղորդ լիցուք մաքրեալ հոգւով:

# ՄՐՎԱ ՁՅՈՒՅՑ

Յառաջ քան զդասառութիւն :

---

Արեւ էդ ինքնաբուն , ինքնազօր  
լուսուած ,

Դու Տէր՝ Տընօրէն՝ Հայլ հանուրց  
ազանց .

Լաթեա կաթիլ մի յանդ մերոց  
մըտաց

Դքոց յանըսպառ յերկնաձիր շնոր-  
հաց :

Որով զարգացեալ ՚ի հրահանգս  
ուսմանց ,

Վատուսցուք քեզ , Տէր , պաշտօն  
գետնամած :

---

# ԳՈՀԱԼԵԹԻՆԵՐ,

ՅԵ ա դաստութեան :

Փառքքեզ, Բարձրբեալ Վատուած  
երկնաւոր,

Վե՛ մեր հըշտուին միտք, քե՛ մեր  
սիրտ բոլոր.


Դու միայն չաստիչ մըշտրնջենա-  
ւոր,

Զիք մեր այլ Վատուած, դու միայն  
հըշտօր :

Ոզքեզ ո՞ւ եաես . . . այլ մեք ճա-  
նաչեմք,

Օի ՚ի քէն եղաք, քե՛ կեամք,  
քե՛ լընչեմք.

Բուանց Աքարչիւ ինամոց ոչինչ եմք,  
Պահեա ըզմեղ, Տէր, ըղսոյն աղա-  
եմք,



Ուեծ ես դու, Տէր, մեծ են քո  
փառք, Վստուած հըզօր,  
Օրհնեալ գովեալ յերկինս ՚ի վեր՝  
յերկիր ՚ի ստոր.  
Ուուրբ՝ սուրբ՝ սուրբ՝ Տէր, հրա-  
շաճայնեալ յերդ հոգեսոր,  
Լից լամկէ յէլցօրհնիս հանապա-  
զօր :

Ոչինչ եմք մեք, ոչինչ զօրեմք քո  
առաջի  
Աալ, և օրհներդ ձայնից յօդել ըստ  
պատշաճի .

Եմիւթականիս տընեղծ յարկաւ ծան  
լիմք յերկրի ,

Խմէ ոչ կողցէ մեզ զօրավեց քո  
հովանի ,

Բամեալքս աստեն վերուղերձեմք  
արդ անմոռաց

Վեզ փառք , պատիւ , և գոհութիւն  
բազկատարած .

Վմենակալ ամենազօր չաստի՛չ Վստ  
ուած ,

Ո՞չք ապիկարք քոյոյ ձեռին եմքը ըս-  
տեղծուած :

Հայտնի՛ ուսաք զի քե շարժիմք ,  
քե՛ եմք , քե՛ կեամք ,

՚ կեն ունիմք՝ զոր ինչ ունիմք , ու  
քեզ կարդամք .

՚ ի մեր վերայ եղիցի միշտ քաղցր քո  
խընամք ,

ՎՃԵԼ ՚ի շնորհս, առնել՝ ընդ որ հա-  
 յի քո կամք ։  
 ՏԵս, ՏԵՐ՝ գլոթա, կեցուզմեր Ա ԵՀ  
 Բարերարս ։  
 Ա արձ տուր նոցա ատ և յերկնից  
 անձառ ՚ի փառս ։



